ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

375015, Երևան 15, Գրիգոր Լուսավորչի 13

№ 1406-Ա «01» հուլիսի 2003 թ.

ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԵՆՐԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՍՐԱՀ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Օհանովի փողոցի հ.8 շենքի հ.46 բնակարանի բնակիչ Հենրիկ Պողոսյանի հայտը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 20.06.2003թ. հ.18-09/3175 եզրակացությունը.

1.Հենրիկ Պողոսյանին սեփականության իրավունքով (02.05.2003թ. հ.1637771 սեփականության վկայական) պատկանող, Շիրազի փողոցին հարող տարածքում թույլատրել կառուցել առևտրի և սպասարկման սրահ:

2.Սահմանել, որ ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման համար հիմք է հանդիսանում սույն որոշմանը կից ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

3.Ընդունել ի գիտություն, որ.

3.1.Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման, համաձայնեցման և շինարարության /շինաշխատանքներն սկսելու/ թույլտվության հայտի ներկայացման համար սահմանված է մեկ տարի ժամկետ:

3.2.Ճարտարապետահատակագծային նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հետ, ներկայացնելով շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույցը:

4.Պարտավորեցնել կառուցապատողին հատկացված հողամասն օգտագործել միայն սույն որոշմամբ սահմանված նպատակներով և պայմաններով:

5.Առաջարկել Աջափնյակի թաղապետարանին (Ա.Խաչատրյան).

5.1. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի, ՀՀ կառավարության 02.02.2002թ. հ.91 որոշման, «Տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքների համաձայն կառուցապատողին հանձնել շինարարության թույլտվությունը՝ սահմանելով համապատասխան տեղական տուրքերի գանձման հարցերը:

5.2.Կառուցապատողի հետ կնքել քաղաքացիաիրավական պայմանագիր նախագծով նախատեսված շինարարության ավարտի ժամկետը կառուցապատողի մեղքով խախտվելու դեպքում, գույքային պատասխանատվություն սահմանելու մասին:

6.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությանը (Հ.Սարգսյան) ապահովել սույն որոշման կատարման ընթացքում ՀՀ իրավական ակտերով նախատեսված քաղաքաշինական փաստաթղթերի ընդունումը և համապատասխան ձևակերպումների կատարումը:

7.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետաշինարարական վերահսկողության վարչությանը (Հ.Մուրադյան) «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26 հոդվածի և ՀՀ կառավարության 12.10.98թ. հ.624 որոշման համաձայն կառուցապատողի սույն որոշմամբ նախատեսված քաղաքաշինական գործունեության նկատմամբ իրականացնել պետական վերահսկողություն:

8.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ - Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ն.Սարգսյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ԱՍ

Համաձայն բնագրի